

ԻՍՏՈՒԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԹՐԵՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՌԻՐԻՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՍՐՏԱՅԻՆ ՌԻԹՄԻ ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՍՈՒՊՐԱՕՊՏԻԿԱԿԱՆ ԿՈՐԻԶԻ ՍՈՐՖՈՑՈՒՆԿՑԻՈՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԱ

ԱԶՆԱՍՏՐՅԱՆ Ա.Վ.¹, ՍԱՅԱԿՅԱՆ Ն.Ա.², ՍԻՍՈՆՅԱՆ Լ.ՅՈՒ.²

¹ Մ. Ջերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանի հյուսվածաբանության ամբիոն, Երևան, Հայաստան

² Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 05/12/2013թ., ընդունված է՝ 24/01/2014թ.

Սթրեսների հետևանքով ձևավորվող համարյա բոլոր հիվանդությունները բնորոշվում են սթրեսային ռեակցիայի առաջատար մեխանիզմի՝ հիպոթալամո-հիպոֆիզ-մակերիկամային համակարգի ակտիվացմամբ, որի համար պատասխանատու գլխուղեղի բարձրագույն կառույցների, մասնավորապես՝ վերտետողական և հարփորոքային կորիզների, մասնակցությամբ է պայմանավորված, նշված իրավիճակներում, վեգետատիվ ֆունկցիաների (սիրտ-անոթային, շնչառական) կարգավորիչ գործընթացների վերահսկողությունը: Սթրեսային իրավիճակներում, նյարդային դիսֆունկցիայի հետևանքով բազմաթիվ ախտահարումների կանխարգելմանը նպաստող միջոցների շարքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում տատրին ամինաթթուն, որի ազդեցությունը, հետսթրեսային փուլում վերտետողական կորիզի քայքայումից հետո, գնահատվել է ժամանակակից համակարգչային մեթոդներից մեկի՝ սրտային ռիթմի փոփոխականության մաթեմատիկական վերլուծությունն օգնությամբ: Մեթոդը բնութագրող ցուցանիշներից, բացի սրտային ռիթմից (CR-Cardial Rate), գնահատվել են նաև սթրեսային հետազոտություններում առավել կիրառվող երկու ցուցանիշներ՝ վեգետատիվ հավասարակշռության ինդեքս-IVE- index of vegetative equilibrium և կարգավորիչ համակարգերի լարվածության ինդեքս-(ITRS- index of tension of regulatory systems):

Փորձաշարում հետազոտվել են առնետների 2 խումբ:

Առաջին խմբում, առնետների վերտետողական կորիզի քայքայման ազդեցությունը՝ սրտային ռիթմի փոփոխականության ցուցանիշների վրա, հետսթրեսային փուլում, գնահատվել է առանց տատրինի, իսկ երկրորդ խմբում՝ տատրինի ներարկմամբ: Տատրին ներարկված կենդանիների մոտ դիտվել է սրտային ռիթմի նորմալացում, սիմպաթիկ ակտիվության նվազում՝ պարասիմպաթիկ ազդեցության գերակշռմամբ:

Սիմպաթո-պարասիմպաթիկ փոխհարաբերությունների նորմալացումը և դրանից բխող օրգանիզմի ադապտիվ հնարավորությունների բարելավումը թույլ է տալիս ենթադրել, որ տատրինն ունի վերականգնող հատկություն և կարող է կանխել սթրեսի արդյունքում զարգացող մի շարք ախտահարումներ: Դրա մասին են վկայում տատրինի ազդեցությամբ գլխուղեղի համապատասխան կառույցների մորֆոֆունկցիոնալ հետազոտությունները, որոնք իրականացվել են Ca^{2+} կախյալ թթու ֆոսֆատազայի ակտիվության բացահայտման մեթոդով:

Այսպիսով, սույն հոդվածում բերված ֆիզիոլոգիական և մորֆոլոգիական տվյալները վկայում են տատրինի հակասթրեսոր ազդեցության մասին: